

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՑՈՒՑԻՉԻ ԾԱԳՈՒՄԸ  
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀՆԴԵՎՐՈՊՈՎԱԿԱՆ ԵՎ  
ՆՈՍՏՐԱՏԻԿ ԱՅԼ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Հայերենի անորոշ դերբայը ծագումնաբանորեն առնչվում է անցյալ դերբայի հետ, քանի որ երկուսն էլ կազմված են *-i* վերջածանցով, որն ունի հնդեվրոպական, անգամ նոստրատիկ ծագում՝ հայ. *-i* «անորոշ դերբայի ածանց» < հ.-ե. *\*-i* «ածականակերտ ածանց»<sup>1</sup> < նոստր. *\*-i* «ածականակերտ ածանց»։ Ածանցի նախնական վերջնածայնավորով ձևը նոստրատիկ լեզուներից պահպանվել է ուրալյան լեզուներում։ Մյուս խմբերում վերջին ծայնավորը սղվել է, ինչպես ալթայյան լեզուներում կամ տեղի է ունեցել սրա հետ կապված նախորդող ծայնավորային տարրով ածանցի ծավալում, ինչպես քարթվելերենում<sup>2</sup>։

Հնդեվրոպական *\*-t-* վերջածանցը հնդեվրոպական ու նոստրատիկ մյուս լեզուներում հանդես է գալիս ինչպես ածականական, այնպես էլ գոյականական ու բայական կազմություններում։ Դեռևս Վ. Իլլիչ-Սվիտիչը նոստրատիկ լեզուներում այդ ձևերը քննելիս՝ գալիս է այն եզրակացության, որ այս ածանցը նախապես հանդես է եկել ածականների և բայածականների կազմության համար։ Այս գործառույթը պահպանվել է ամենուրեք։ Գոյականակերտ գործառույթում այն մի կողմից դառնում է փոքրացուցիչ մասնիկ, մյուս կողմից՝ ածանցավոր գոյականների վերջածանց<sup>3</sup>։

Հնդեվրոպական ածականական կազմություններում այն հանդես է գալիս հին հնդկերենում, հայերենում, լատիներենում, հունարենում, գերմանական և անատոլիական լեզուներում։ Հին հնդկերենում *\*-i*-ով ձևերը չնչին են։ Ռ. Շտեմպելն որոշակի հավանակությամբ խոսում է *-ala-* ով < *\*-olo* ձևերի մասին, օր.՝ *peśala* - «զարդարած» < *pś-* «զարդարել», որն էլ համապատասխանում է հունարենի *ποικίλος* -ին «զույնզգույն» և *δαίλος* -ին «սարսափելի» < *daídō* «սարսափել, վախեցնալ»։ Լատիներենում առկա է *-it-* «ածականական ածանցի»

<sup>1</sup> Հնդեվրոպաբանության մեջ ընդունված է նաև այս ածանցի *\*-lo*-ով վերականգնումը։ Հմմտ. Մեյե Ա., Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ, Ժնև, 1988, էջ 84։ Джаукян Г.Б., Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, с. 132.

<sup>2</sup> Иллич-Свитыч В.М., Опыт сравнения ностратических языков, 1-3, М., 1976, 2 с. 21.

<sup>3</sup> Նույն տեղում։

դրսևորումը՝ *humilis* «հողային» *humus* –ից: Գերմանական լեզուներում հ.-ե. \* -*olo-* վերջածանցը տալիս է \* -*ala-* , որը ցույց է տալիս որևէ հակում՝ *ezzal* «որկրամոլ, շատակեր»<sup>4</sup>:

Անատոլիական լեզուներում առկա են և՛ գոյականից՝ \**-li-* «ածականակերտ ածանց»՝ խեթ. *atta-la* «հայրական», հիեր. խեթերեն *tata-li-* «հայրական» և՛ բայից ածանցված ձևեր՝ *miyanti(ya)la* «պտղատու, պտղաբեր» < \**miyantiya* < *miyant* «արգասաբերության մեջ եղող», լուվ. *ulant-alliya* «մեռնող, մահկանացու»<sup>5</sup>:

Նոստրատիկ լեզուներում նույնպես գերիշխող են ածականական կազմությունները: Այսպես՝ ուրալյան լեզուներում՝ \**-la/-lā* -ն անվանական և բայական ածականի վերջածանց է՝ ֆին. *vete-lä* «ջրային, հեղուկ», մարիերեն. *mar-lää* «մարիական» և այլն: Ալթայյան լեզուներում՝ \**-l-*ն համղես է գալիս որպես ածականական վերջածանց՝ թուրք. \**Kyri-l* «կարմիր» \**Kyri-* ից «շիկանալ, կարմրել»: Հարցականով Իլիչ-Սվիտիչը բերում է նաև սեմաքամյան նախածները՝ \**-al-*, \**-ul-* «ածականական ածանց»՝ սիդամո *-allo* «ածականական ածանց»՝ *labb-allō* «առնական» < *labbā* «այր»<sup>6</sup>:

Գոյականական կազմություններում այս ածանցն ունի իր դրսևորումը որպես փոքրացուցիչ մասնիկ. ինչպես նաև վերացական գոյականների, գործիքների և այլ անվանումների վերջածանց: Որպես փոքրացուցիչ մասնիկ համղես է գալիս՝ հայերենում *ուլ* < \**ro-lo-* (\**ro-* ից «փոքր, աննշան»), որը համապատասխանում է հուն. *πυλός* «քուռակ, կենդանու ծագ», ալբ. *pele, pële* «զամբիկ», գոթ. *fula*, հվգ. *folo* «քուռակ»<sup>7</sup>:

Նոստրատիկ մյուս լեզուներում այն նույնպես ունի իր զուգահեռները. ինչպես օրինակ ուրալյան լեզուներում՝ մորդով. երգյան. *ašo-la* «սպիտակավուն» < *ašo* «սպիտակ», քարթվական լեզուներում՝ վրաց. բարբառ. *mam-il-a* «հայրիկ»<sup>8</sup>: Հարցականով Իլիչ-Սվիտիչը բերում է նաև սեմաքամյան նախածները՝ \**-al-*, \**-ul-* փոքրացուցիչ իմաստով՝ արաբ. *ṭifl-*, սիրիերեն՝ *ṭepā* «երեխաներ»<sup>9</sup>:

<sup>4</sup> Stempel R., Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983, S 41-43: Иллич-Свитыч В. М., *Նշվ. աշխ.* էջ 20:

<sup>5</sup> Иллич-Свитыч В. М., *Նույն տեղում*: R. Stempel, *Նշվ. աշխ.* էջ 41:

<sup>6</sup> Иллич-Свитыч В. М., *Նշվ. աշխ.*, 2, էջ 20-21:

<sup>7</sup> Д. жаукян Г. Б., *Նշվ. աշխ.*, էջ 132:

<sup>8</sup> Иллич-Свитыч В. М., *Նույն տեղում*:

<sup>9</sup> Նույն տեղում:

խթերենում աչք է զարնում *-l* վերացական գոյականների հարաբերականորեն մեծ խումբը, օր. *šarnik-zēl* «ապաշխարանք» < *šarnikzi* «ապաշխարում է»<sup>10</sup>:

Հունարենում, լատիներենում և գերմանական լեզուներում այն կարող է կազմել նաև գործիքների անվանումներ, օր.՝ հուն. *πᾶσσαλος* «փայտյա մեխ», լատ. *capulus* «բռնիչ» < *capō* «բռնել», *speculum* «հայելի» < *spec-tō* «նայել», հվգ. *zugil* «սանձ» < *ziohan* «քաշել»<sup>11</sup>:

Այլ անվանումներում *\*/a* ժամանցը նույնպես ունի իր դրսևորումը: Այսպես հայերենում՝ *\*-lo-* > *-l*, *ծոլլ* «ծուլածո» < *\*gheu-lo* (*\*gheu-* ից «ծուլես») <sup>12</sup>, Հր. Աճառյանը բերում է նաև նրա հետևյալ իմաստները «թափած, ծուլած, միապաղաղ, ամուր, պինդ»<sup>13</sup>, որն էլ նշանակում է, որ այս ժամանցը հայերենում նույնպես ունեցել է նաև ածականակերտ գործառույթ: Ամփջաբար հնդեվրոպականից եկող *\*-la-* ուլ և *\*-la-* ուլ կազմությունները համեմատաբար քիչ են և դեռևս վաղնջահայերենում սահմանափակ գործածություն են ունեցել՝ ամուլ, աքաղաղ (հմնտ.բրբ. *աքլոր*), *գայլ*, *թել*, *մատաղ*, *շող*, *քող* և այլն:

Ջահուկյանը *\*-li* ժամանցը՝ ի հոլովիչով համարում է *\*/lo-* ի տարբերակը՝ *բոլլ*, *դայլ*, *դուլ*, *խուլ*, *հոլլ*, *սալ*, *քաղ*: Մի շարք դեպքերում հին հայերենում *\*/lo-* ուլ հիմքերը պահպանվել են միայն բաղադրությունների կազմում՝ բրբ. *ակլլակ* «դարան», *ասեղն* (*\*ak'ilon*), *սլաք* (*\*k'ū-lā*) և այլն<sup>14</sup>:

Գերմանական լեզուներում առկա են նաև *\*/la-* < *h-*, *h-*. *\*/lo-* ուլ մի քանի հին ձևեր, ինչպես՝ գոթ. *sitts*, հին անգլ. *sell* «նստատեղ» որը համապատասխանում է լատ. *sellā*-ին «աթոռ»<sup>15</sup>, ուրալյան լեզուներում՝ մանսիսկերեն *ūsi-/«բայլ»* *ūš*-ից «քայլել», վրաց. *barḡ-al* «ազդր»<sup>16</sup>:

Ինչ վերաբերում է բայական կազմություններին, ապա *\*/l-* վերջածանցը կարող է հանդես գալ և՛ որպես դերբայական ձևերի, և՛ որպես այդպիսին բաղադրյալ ժամանակածների ու եղանակածների կազմում, և՛ որպես բազմակիություն նշող վերջածանց:

Որպես դերբայակերտ ածանց այն հանդես է գալիս հնդեվրոպական լեզուներում, ինչպես՝ հայերենում, լիդիերենում, սլավոնական և թուսարական

<sup>10</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 41:

<sup>11</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 42-43:

<sup>12</sup> Д. Жайкян Г. Б., նշվ. աշխ., էջ 132:

<sup>13</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 158:

<sup>14</sup> Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 233:

<sup>15</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 43:

<sup>16</sup> Иллвич-Свитич В. М., նշվ. աշխ., 2, էջ 20-21.

լեզուներում, ընդ որում որպես ինֆինիտիվ՝ միայն հայերենում և լիդերենում, որպես բայածական՝ հայերենում, սլավոնական լեզուներում, իսկ որպես գերունդիվ՝ հայերենում և թուսարական լեզուներում:

Անդրադառնալով *“-lo- ին՝* Ջահուկյանը նշում է որ այս ածանցը հնդեվրոպական շրջանում կազմում էր անուններից անուններ՝ ընդլայնելով ածանցելի հիմքերը, իսկ այն տարածքում որին պատկանում էին նախահայերենը նախասլավոներենը և այլն, անուններ էր կազմվում նաև բայերից. վաղնջահայերենում այս գործառնությունը ընդարձակավել է՝ հնդեվրոպական դերբայական բուն մասնիկների արտամղումով. նրանով կազմվում են անորոշ, անցյալ, ապառնի *“-llo->* հ. հ. *–լի* (երբեմն ենթակայականի արժեքով՝ *ածելի, բերելի*), *g-* ի հարադրությամբ՝ բուն ապառնի դերբայ՝ *ածելոց, բերելոց*<sup>17</sup>:

Ե՛վ անորոշ, և՛ անցյալ դերբայները հայերենում պատկանում են *n* արտաքին հոլովմանը: *h* հիմքով բայերը անորոշը կազմում են *ե* հիմքով, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք որպես անանցողական բայեր ներգործական *ե* հիմքով չեն կազմվում: Սա էլ հուշում է, որ անորոշը հին հայերենում սեռային տարբերակում չի ունեցել, այլ կերպ՝ կարող է արտահայտել ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական իմաստ: Անորոշը պահպանում է նախորդող հիմքային ծայնավորները՝ *-ել, -իլ, -ալ, -ուլ*:

Ինչ վերաբերում է, անցյալ դերբային, ապա ըստ Մարիեսի՝ նրա *-եալ* վերջավորությունը բխում է հ.ե. *“-i-s-ā-lo-* ից<sup>18</sup>, քանի որ *“-lo* վերջածանցը միանում է *-եմ*-ով բայերի աորիստի *-ea* ածանցին, որը բխում է հնդեվրոպական *“-is-ā* ից<sup>19</sup>: *“-is-ā -lo-* ի *ā* ին էլ նա վերագրում է վիճակի իմաստ: Ընդ որում, նա այս կազմության աղբյուրը համարում է հենց *-եմ* (անցողական) բայերը, քանի որ միայն այստեղ են համընկնում աորիստի և բայածականի հիմքերը, ինչպես *արծակեա-ց* և *արծակեա-լ*: Ուշագրավ է, որ Մարիեսը բայածականի՝ աորիստի հիմքից կազմությունը նորակազմություն է համարում հնդեվրոպական լեզուներում<sup>20</sup>:

Փորձելով պարզել հայերենի երկու դերբայների ծագումն ու ներքին զարգացումը՝ Ռ. Շթեմպելը գալիս է այն եզրակացության, որ նախապես այս ձևը հանդես է եկել անցյալ դերբայի կազմում կրավորական իմաստով, այնուհետև անորոշ դերբայի: Գործառական տեսանկյունից նա այն համեմատում է

<sup>17</sup> Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 232-233:

<sup>18</sup> Джагян Г. Б., նշվ. աշխ., էջ 132:

<sup>19</sup> Mariès L., Sur la formation de l'aoriste et des subjonctifs en *-c-* (*-š-*) en arménien, REA, 1930, t. X, fasc. 2, p. 175.

<sup>20</sup> Mariès L., նշվ. աշխ., էջ 170:

հնդեվրոպական *\*-to* -ով և *\*-no* -ով ձևերի հետ և գուգահեռներ տանում նաև գերմանական լեզուների հետ, որտեղ *\*-ana* < հ.ե. *\*-ono* -ով ձևերը հանդես են գալիս նախապես որպես բայածականի, այնուհետև ինֆինիտիվի ցուցիչներ: Սրա մասին են խոսում նաև ցեղակից լեզուների տվյալները<sup>21</sup>:

Լիդիերենում /-ով ձևերը ներկայացնում են անցյալ անկատարի երրորդ դեմքում՝ *fadol* «կանգնեցնում էր», *katavil* «ղնում էր»: Ուշագրավ է, որ Լ. Սարաջևան *ol* -ով ձևերը հնարավոր ինֆինիտիվ է համարում՝ *arvol* «ունենալ»<sup>22</sup>, թեև չի ժխտում, որ /-ով բայածականը լիդիերենում հանդես է գալիս որպես անցյալ ժամանակ՝ *in-al* «նա արել է»<sup>23</sup>:

Իսկ հնդեվրոպական լեզուների շրջանակից դուրս *\*-/* վերջածանցն ունի բայակազմիչ հետևյալ գործառույթները՝ քարթվելական *\*-/ -/e// - il -* «դերբայական և բայանվանական ածանց»՝ վրաց. *-il-* «բայածականի և մասդարի վերջածանց»՝ *cer-il* «գրված», *dum-il* «լուծյուն, լուել», մեգրել. *-ir* «մասդարի վերջածանց»՝ *kix-ir-* «ընթերցանություն, կարդալ»<sup>24</sup>: Ուշագրավ է, որ /-ով անցյալ կրավորական բայածականը հայերենից թարգմանություններում հազվադեպ է թարգմանվել անցյալ դերբայի փոխարեն<sup>25</sup>:

Բաղադրյալ ժամանակաձևերի կազմում՝ պերֆեկտում և պլուսքվամ-պերֆեկտում, /-ով բայածականը հանդես է գալիս հայերենում և սլավոնական լեզուներում, իսկ ըղծական եղանակում՝ հայերենում, սլավոնական և բալթյան լեզուներում:

Սլավոնական լեզուներում *-to* -ով կազմությունները առաջին հերթին համեմատվում են հայերենի անցյալ դերբայի ձևի հետ, քանի որ համարժեք են, միայն ի տարբերություն հայերենի ձևի, որը ծագումնաբանորոն անանցողական պատիվ է, սլավոնականի ձևը, ըստ Շտեմպելի, ակտիվ է՝ *znahъ* «իմացած եղող», թեև նա նույնպես ընդունում է, որ հաճախ այս ձևը միանում է արմատին, որը համընկնում է ինֆինիտիվ-աորիստի հիմքի հետ, ինչպես նաև վերը նշված օրինակում: Ուշագրավ է, որ Սարիեն հայերենի անցյալ դերբայը նույնպես նախնական անվանական կառույց է համարում և հատկապես գործող անձ

<sup>21</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 45-48.

<sup>22</sup> L. Saradjeva, An Armeno-Slavo-Tokharian Innovation, AAL, vol.3, 1982, p. 50.

<sup>23</sup> Ильич-Синицыч В.М., նշվ. աշխ., էջ 20:

<sup>24</sup> Ильич-Синицыч В.М., նշվ. աշխ., էջ 20-21:

<sup>25</sup> Мартиросов А. Г., Сравнительно-типологический анализ некоторых грамматических явлений древнеармянского и древнегрузинского языков, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 1984, էջ 397:

/nomen agentis/, որը նա հիմնավորում է այդ կազմության աղբյուրը համարելով անցողական բայերը<sup>26</sup>:

Հայերենում և սլավոնական լեզուներում բայածականները հանդես են գալիս նաև առանց հանգույցի՝ որպես պարզ ժամանակաձևեր: Հայերենում այդ ձևերը հետագայում վերանում են, իսկ ռուսերենում, ընդհակառակը, նախապես խոսակցական լեզվում մեծ տարածում գտնելով՝ ավելի ուշ հանդես են գալիս որպես անցյալի ձևեր<sup>27</sup>:

Բացի հայերենից, լիդիերենից և սլավոնական լեզուներից ուշագրավ զուգահեռ ենք տեսնում նաև և ումբրերենում, որտեղ այն հանդես է գալիս ապառնի – պերֆեկտի ձևով՝ *entelust* «**դնել** բայի ապառնի պերֆեկտի երրորդ դեմքը»: Կ. Բաքը այն վերականգնում է որպես *\*en-tend-lo*: Սակայն Շտեմպելը վկայված ձևերի սղության պատճառով փոքր-ինչ զգուշությամբ է վերաբերվում դրան<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է խնրո առարկա ածանցի եղանակակերտ գործառույթին, ապա այն ի հայտ է գալիս երկրորդական կազմություններում, ինչպես օրինակ՝ դեռևս հին հայերենի ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ձևերում՝ կազմված ապառնի դերբայով և հանգուցով՝ *սիրելոց իցեն*, *սիրելոց իցես* կամ անցյալ դերբայով և *եմ* օժանդակ բայի առաջին ապառնիով՝ *սիրեալ իցեն*, *սիրեալ իցես*<sup>29</sup>: Հին ռուսերենում այն հանդես է գալիս նաև ստորադասական եղանակի կազմում՝ որպես հանգույց հանդես եկող *пои*՝ և *по* աորիստի ձևերի հետ միասին՝ *написалъ(-а,-о) быхъ*<sup>30</sup>:

Որպես եղանակակերտ ածանց այն առկա է նաև կելտական և բալթյան լեզուներում, թեև այդքան էլ տարածված չէ: Սիայն բալթյան լեզուներում բազմաթիվ են *-lis* -ով ձևերը, որոնք համապատասխանում են մյուս լեզուների *\*-lo* -ով ձևերին<sup>31</sup>: Յա. Մ. Էնձելին հիշատակում է նաև հին լիտվ. *esle*, *esliui* (հմտ. խեթ. *ašallu*, *ešlit*), լատիշ. պայմանական եղանակի եզակի թվի առաջին դեմքի *-lu-šu* և ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքի *-šu* վերջավորությունների մասին, որոնք նա հանգեցնում է հրամայականի եզակի թվի երրորդ դեմքի ձևին՝ *-la* (լատիշական ժողովրդական երգերում), նաև պրուս. ըղծ. *-lai*,

<sup>26</sup> Mariés L., նշվ. աշխ., էջ 175:

<sup>27</sup> Saradjeva L., նշվ. աշխ., էջ 51-52: |

<sup>28</sup> Buck C. D., A Grammar of Oscan and Umbrian, Boston 1904, Հմտ. R. Stempel, նշվ. աշխ., էջ 43:

<sup>29</sup> Արրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1964, էջ 214-215, 218-220:

<sup>30</sup> Горшкова К. В., Хабургаев Г. А., Историческая грамматика русского языка, Москва, 1981, с. 315.

<sup>31</sup> Stempel R., նշվ. աշխ., էջ 46:

որոնք Վ. Վ. Իվանովը համեմատում է խեթերենի հրամայական ձևերի հետ<sup>32</sup>։ Խեթերենի *-lu* -ով հրամայականի *-u*-ն զարգացել է ավելի ուշ հրամայականի մյուս ձևերի համաբանությամբ։ Եթե ընդունենք, որ խեթերենի *-l* -ով վոյյունտատիվը զարգացել է եղանակային իմաստ ունեցող բայանուններից, որը հետագայում ներառվել է հրամայականի հարացուցյուն *u* վերջավորությամբ, ապա հնարավոր է նրանք կապել պարտավորության իմաստ ունեցող թոխարերենի *-lye* -ով գերունդիվի և հայերենի *-l* -ով ապառնի II դերբայի հետ<sup>33</sup>։ Վերջինս սակայն չունի բայական ողջ հարացույցը և գործածվում է միայն եմ հանգույցի երրորդ դեմքի հետ՝ *սիրելի է*<sup>34</sup>։ Հայտնի է որ այն կարող է հանդես գալ և՛ ածականակերտ, և՛ գոյականակերտ գործառնությով։ Անգամ որոշ հայագետներ *h* -ով ձևը համարում են ածական, քանի որ այն վերջնականապես անցել է բայածականների շարքը և բայական համակարգի մեջ չի մտնում<sup>35</sup> և զուտ ապառնի դերբայ են համարում *-իք* ով ձևը։ Այն հանգում է *\*-/(i)-yo* -ով բաղադրյալ բայածականին՝ պարտադրականության, անհրաժեշտության իմաստով։ Նույն նախածին են հանգում նաև թոխարերենի գերունդիվները։

Ե՛վ թոխարական Ա խմբում, և՛ Բ խմբում կան գերունդիվ I՝ *-l* < *\*-lo* - և գերունդիվ II-ը՝ *-lle, -lye* < *\*-lio* -<sup>36</sup>։ Գերունդիվ I -ը սերում է ներկայի հիմքից և ունի անհրաժեշտության նշանակություն, գերունդիվ II-ը ըղծականի հիմքից է սերում և ունի հնարավորության իմաստ։ Երկու գերունդիվներն էլ սկզբունքորեն սեռային առումով չեզոք են, սակայն հիմնականում կրավորական իմաստ ունեն<sup>37</sup>։ Գերունդիվ I -ը արտահայտում է մի գործողություն, որը պետք է իրականանա, իսկ գերունդիվ II -ը՝ մի գործողություն, որը կարող է իրականանալ<sup>38</sup>։

Ե՛վ Բենվենիստը, և՛ Շտեմպելը հայերենի, սլավոնական և թոխարական լեզուների այս ձևերը համարում են առանձին զարգացման արդյունք<sup>39</sup>։

Նոստրատիկ մյուս լեզուներում խնդրո առարկա ածանցը բայական կազմություններում այլ իմաստով է հանդես գալիս։ Այսպես՝ թուրքական և

<sup>32</sup> Иванов Вяч. Вс., Рецензия на книгу: Hittite et indo-européen Études comparatives, Paris, 1962 – ВЯ, 1963, 4, с. 127-136.

<sup>33</sup> Сараджева Л. А., Об одной армяно-славяно-тохарской инновации, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 1984, էջ 191:

<sup>34</sup> Saradjeva L., նշվ. աշխ., էջ 48-50:

<sup>35</sup> Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2002, էջ 252:

<sup>36</sup> Stempel R., նշվ. աշխ., էջ 44-45: Иллч-Свитыч В.М., նշվ. աշխ., էջ 20. В. Краузе, Тохарский язык, Тохарские языки, сб. ст., М., 1959, с. 68-69.

<sup>37</sup> Stempel R., նշվ. աշխ., էջ 44-45.

<sup>38</sup> Тохарские языки, сб. ст., М., 1959, с. 193-194.

<sup>39</sup> Stempel R., նշվ. աշխ., էջ 45: Бенвенист Э., Тохарский и индоевропейский, Тохарские языки, сб. ст., М., 1959, с. 97.



ուգրաֆինական լեզուներում այս վերջածանցը երբեմն կարող է անհամապատասխան թազմակիության իմաստ, թեև թուրքական լեզուներում *-la*, *-ala* վերջածանցներով թազմակի գործողություն նշող բայերի թիվը թիչ է թազմաբնույթուն նշող *-la* ով վերջածանցի տարածմանը խանգարել է այն համաձայնեցը, որ այն սկսել է գործածվել որպես բայանունների կազմության միջոց<sup>40</sup>։ Հունարեններում *-l* վերջածանցը նույնպես կարող է արտահայտել և՛ թազմաբնույթության իմաստ, և՛ պատճառական իմաստ։ Պերական լեզուներում համապատասխանության հին վերջածանցը բայական ձևերում հանդես է գալիս որպես գործողության խնդրի թազմակիության ցուցիչ<sup>41</sup>։

Այսպիսով, եթե *-l* վերջածանցը եղանակակերտ և ժանանկաբանական գործառնություններով հանդես է գալիս հնդեվրոպական, ուրալյան աբխազ և քարթվեական լեզուներում, ապա դերբայակերտ գործառնությամբ միայն հնդեվրոպականում ու քարթվեականում։

Կարելի է առանձնացնել մեկ գործող անձի խումբը, որը միջին դիպք է գրավում անվանական և բայական կազմությունների միջև, քանի որ որոշ լեզուներում այն արդեն մուտք է գործել բայական համակարգ, մյուսներում մնացել անվանական կազմությունների շարքում։ Գործող անձի իմաստը, ըստ է. Բենվենիստի և Ա. Յուզակիսի, բաղկացած է հետևյալ իմույթներից՝ կատարչություն, անկատարություն, նպատակ, մտադրություն և այլն<sup>42</sup>։ Հայերենում *առլ* ենթակայական դերբայի մասնիկը նույնպես հանգում է հնդեվրոպական 7-ին, որը համապատասխանում է ռուս. *-ица* < սլավ. *\*-lo-*, իսբ. *ala* (< *h*-*b*, *\*-olo-*) - ով ձևերին՝ *-tallaš* վերջածանցը<sup>43</sup>։ *aurjala* «սահմանապահ զինվոր» < *auri* «սահմանի հսկողություն»<sup>44</sup>։ Հունարենում և լատիներենում այն նույնպես կարող է կազմել գործող անձ՝ հուն. *διδάσκαλος* «ուսուցիչ»<sup>45</sup>, *legulus* «պտուղների հավաքող» *leg-* ից «հավաքել»<sup>46</sup>։ Գերմանական լեզուներում որպես գործող անձի վերջածանցներ նրանք հանդես են գալիս հին վերին գերմաներենում *tregil* «կրող»՝ *tragan* -ից<sup>47</sup>։

<sup>40</sup> Серебрянников Б. А., Вероятностные обоснования в компаративистике, М., 1974, с. 331-332.

<sup>41</sup> Серебрянников Б. А., նշվ. աշխ., էջ 176.

<sup>42</sup> Юдакин А. П., Развитие структуры предложения в связи развитием структуры мысли, М., 1984, с. 102.

<sup>43</sup> Զահուկյան Գ. Բ., Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 235։  
Иллич-Свитыч В.М., Опыт сравнения ностратических языков, 1-3, М., 1976, 2 с. 20.

<sup>44</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 41։

<sup>45</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 41-42։

<sup>46</sup> Иллич-Свитыч В.М., նշվ. աշխ., էջ 20։

<sup>47</sup> R. Stempel, նշվ. աշխ., էջ 43, Иллич-Свитыч В.М., նշվ. աշխ., էջ 20։



Նոստրատիկ լեզուներից այն առկա է մոնղոլերենում, որտեղ հանդես է գալիս որպես բայածականի և բայանվան վերջածանց *tani-i* «ծանոթ» *tani-* «ծանաչել» բայից: Հարցականով Իլիչ-Սվիտիչը բերում է նաև դրավիդյան և սեմաքամյան լեզուների տվյալները՝ դրավ. լեզ.՝ մալտո *-le*, բայածականի վերջածանց՝ *tund-le* «տեսնող» և արևելյան քուշերեն՝ սոմալի *-ā* «գործող անձի վերջածանց»՝ *tum-ā* «դարբին» *tum-* «ծեծել» -ից<sup>48</sup>:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ \*-I ով ձևերը թե՛ հնդեվրոպական լեզուների շրջանում, թե՛ նրանից դուր գերիշխող են ածականակերտ գործառույթում, այնուհետև բայածականի, գործող անձի և պերֆեկտի կազմության մեջ: Բավականին հազվադեպ են հանդես գալիս անորոշ դերբայում և մասդարում: Նոստրատիկ լեզուներում վերոհիշյալ գործառույթներից ավելանում են գործողության բազմակիության ցուցիչի գործառույթները: Իսկ գոյականական կազմություններից հիշյալ ածանցը առավել կենսունակ է որպես փոքրացուցիչ մասնիկ, այնուհետև՝ վերացական գոյականների, գործիքների և այլ անվանումների կազմություններում: Ուշագրավ է, որ գործածության ծավալի տեսանկյունից ամենալայնը հայերենինն է: Նրան հաջորդում են սլավոնական, գերմանական լեզուները, հունարենը, լատիներենը, անատոլիական և բալթյան լեզուները, նոստրատիկ լեզուներից՝ ուրալյան, քարթվելական, սեմաքամյան, դրավիդյան և ալթայյան լեզուները:

#### The Origin and Function of the Marker of the Armenian Infinitive in Comparison to the Indo-European and Nostratic Languages

The infinitive and past participle of Old Armenian are built with the *-I* suffix, which has an indo-european and even a nostratic origin. The indo-european \**-I* suffix in the other indo-european and nostratic languages appears in adjective, verbal and noun constructions.

It is remarkable, that the forms with \**-I* within the framework of the indo-european and nostratic languages are predominantly in the function of the adjective, then in the function of the participle, agent nomen and perfect.

Thus in noun constructions it mostly occurs in the diminutive participle, then in the names of instruments, abstract and other nouns. Rare enough they occur in the infinitive and masdar.

<sup>48</sup> Иллич-Свитыч В.М., 624. աշխ., էջ 20-21: